ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿ-Ի ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Մարտի 22-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի գլխավոր քարտուղար Սուպաչայ Պանիտչպակդիին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի եւ ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի միջեւ ձեւավորված համագործակցությանը, ինչպես նաեւ համաժողովի ներդրած ջանքերին՝ ի նպաստ Հայաստանի տնտեսական առաջընթացի եւ մրցակցային օրենսդրության բարելավման:

Այս առիթով Նորին Սրբությունը, ի դեմս ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի գլխավոր քարտուղարի, իր գնահատանքը հայտնեց միջազգային այն բոլոր կազմակերպություններին եւ ծրագրերին, որոնք զորակցում են Հայաստանի Հանրապետությանը՝ երկրի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում:

Իր խոսքում Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ քրիստոնեական հավատի կարեւոր դերակատարությունը հայոց կյանքում՝ վստահություն հայտնելով, որ մեր ժողովուրդն իրեն հատուկ խորը հավատքով, խոհեմությամբ, աշխատասիրության ու լավատեսության ոգով կհաղթահարի կյանքի բոլոր դժվարությունները:

Հանդիպումից հետո ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի գլխավոր քարտուղարն այցելեց նաեւ Մայր Աթոռի թանգարան, ծանոթացավ Հայ Եկեղեցու հոգեւոր-եկեղեցական արժեքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԱՆՏԻՈՔԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԱՐՈՆԻՏ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Անտիոքի եւ Համայն Արեւելքի մարոնիտ կաթոլիկ պատրիարք Բեշարա Ալ Ռահի (նստավայրը՝ Լիբանան)՝ վերջինիս ընտրության եւ գահակալության առիթով՝ մաղթելով երկարամյա արդյունավետ գահակալություն:

«Լիբանանի պատմության այս վճռորոշ ժամանակահատվածում Դուք ընտրվեցիք որպես Մարոնիտ Եկեղեցու 77-րդ պատրիարք՝ բազում տարիների Ձեր նվիրյալ ծառայության համար: Ուրախ ենք հաստատելու, որ Ձերդ Ամենապատվությունն արդեն իսկ նշանակալի քայլեր է ձեռնարկել Լիբանանում հաշտության եւ քաղաքական երկխոսության հաստատման ուղղությամբ», - ասվում շնորհավորագրի մեջ:

Նորին Սրբությունն անդրադարձել է Հայոց Ցեղասպանության օրերին Լիբանանի ժողովրդի՝ այդ թվում Մարոնիտ Եկեղեցու հետեւորդների կողմից հայ ժողովրդի տարագիր